ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.1. Աշխարհի տարածաշրջանները

Յուրաքանչյուր տարածաշրջանում կան առաջատար, այսպես կոչված լիդեր երկրներ: Օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայում երկուսն են՝ ԱՄՆ-ը և Կանադան, Լատինական Ամերիկայում՝ Բրազիլիան, Արգենտինան, Մեքսիկան (Կենտրոնական Ամերիկայում), Ասիայում՝ Ճապոնիան, Չինաստանը, Հնդկաստանը, Եվրոպայում՝ Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Իտալիան, եվրասիականում՝ Ռուսաստանը, Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասում՝ Ավստրալիան (տես՝ «Աշխարհի բաժանումը խոշոր տարածաշրջանների» քարտեզը):

• • •

Սույն դասընթացով դուք աշխարհն ուսումնասիրելու եք ըստ նրա ***տարածքային բաղադրիչների՝ տարածաշրջանների ու պետությունների***, բացահայտելու եք յուրաքանչյուրի առանձնահատկությունները, բնորոշ գծերը, համեմատելու եք մյուսների հետ, գնահատելու եք յուրաքանչյուրի տեղն ու դերն արդի աշխարհում, ներդրած ավանդը համամարդկային քաղաքակրթության մեջ, աշխարհը՝ մարդոլորտը ճանաչելու եք նրա ներքին կառուցվածքով և բազմազանությամբ:

• • •

Դասընթացը խորացնելու է քարտեզի՝ աշխարհագրության «երկրորդ լեզվի» իմացությունը, որը ձեզ տալու է նոր կարողություններ ու հմտություններ՝ համեմատելու ուսումնասիրվող երկրներն ու ժողովուրդներին, մեր հեռու և մոտիկ հարևաններին ու դրա միջոցով խորությամբ ճանաչելու և գնահատելու մեզ շրջապատող աշխարհը, այն բարդ ու հակասական երևույթները, որոնք ծառացած են ինչպես աշխարհի, այնպես էլ մեր ժողովրդի ու հայրենիքի, մեզանից յուրաքանչյուրի առջև:

• • •

Դրանցից յոթը ժամանակակից աշխարհի առաջատար, խոշորագույն պետություններն են (չորսը «Մեծ յոթնյակի» անդամ երկրներից. ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա, երեքը տարածքի մեծությամբ ու բնակչության թվով, քաղաքական դերով խոշոր պետություններ են՝ ՌԴ-ն, Չինաստանը և Հնդկաստանը), ինչպես նաև մեր չորս անմիջական հարևանները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան և Իրանը, որոնց ուսումնասիրությունը խիստ կարևոր է մեզ համար: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հարավարևմտյան Ասիայում, իսկ ֆիզիկաաշխարհագրական առումով՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում:

• • •

Յուրաքանչյուր պետություն կամ տարածաշրջան ուսումնասիրվում է հետևյալ հաջորդականությամբ կամ աշխարհագրական հետազոտության մեթոդով. աշխարհագրական դիրքը և սահմանները, բնությունը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը՝ բնակչության թիվը, շարժը, կազմը, մշակութաքաղաքակրթական առանձնահատկությունները, տնտեսությունը՝ տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը, տարբեր ճյուղերի զարգացման, տեղաբաշխման ու մասնագիտացման (այդ թվում՝ միջազգային) առանձնահատկությունները:

Դասագրքում զետեղված են տարբեր տիպի քարտեզներ ու քարտեզգծապատկերներ, որոնք կօգնեն ձեզ ճիշտ պատկերացնելու տեքստում շարադրված նյութի բովանդակությունը և նպատակը: Քարտեզագրական ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ նաև առանձին ատլասներից և դպրոցական քարտեզներից:

• • •

Լայնորեն օգտագործելու ենք աշխարհի ճանաչման աշխարհագրական համեմատական մեթոդը:

Դասընթացը բաղկացած է վեց թեմաներից: Յուրաքանչյուր թեմա ներկայացնում է տարածաշրջանների բաժանված մեկ աշխարհամաս կամ մայրցամաք: Օրինակ՝ Եվրասիան ներկայացված է երկու թեմայով՝ «Եվրոպա» և «Ասիա», «Ամերիկա» թեման ներկայացված է Հյուսիսային և Լատինական Ամերիկաներով: Լատինական Ամերիկայում առանձնացվում է երկու տարածաշրջան՝ «Կենտրոնական Ամերիկա» և «Հարավային Ամերիկա»: Մյուս թեմաներն են՝ «Աֆրիկա», «Ավստրալիա և Օվկիանիա» ու «Անտարկտիկա»

աշխարհամաս: Աֆրիկան ներառում է հինգ տարածաշրջան, Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասը հանդես է գալիս որպես առանձին տարածաշրջան: Ամեն մի տարածաշրջան միավորում է սահմանակից պետությունների որոշակի խումբ՝ բացառությամբ Ավստրալիա և Օվկիանիա տարածաշրջանի: Դասագրքում առանձնացված ու մանրամասն բնութագրված է 11 պետություն: